Նախագիծ

Երկրորդ ընթերցում

Լրամշակված նախագիծ

Կ-761-08.10.2020-ՊԻ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ
ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության 1985 թվականի դեկտեմբերի 6-ի օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 23-րդ հոդվածի 1-ին մասում լրացնել հետևյալ բովանդակությամբ 7.1-ին կետ.

«7.1) տնտեսական գործունեության կասեցում.»

Հոդված 2. Օրենսգիրքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 31.1-ին հոդվածով.

«**Հոդված 31.[1] Տնտեսական գործունեության կասեցումը**

1. Տնտեսական գործունեության կասեցումը տնտեսական գործունեության ժամանակավոր դադարեցումն է:

2. Տնտեսական գործունեության կասեցումը կարող է նշանակվել մեկ ամսից մինչև երեք ամիս ժամկետով:»

Հոդված 3. Օրենսգիրքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 182[5]–րդ հոդվածով՝

«**Հոդված 182[5] Ռազմական դրության իրավական ռեժիմի ընթացքում գործող կանոնները խախտելը**

1. Ռազմական դրություն հայտարարված տարածքում ազատ տեղաշարժվելու իրավունքի սահմանափակումը կամ տարածք մուտք գործելու և տարածքից դուրս գալու հատուկ ռեժիմը խախտելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից մինչև երեքհարյուրապատիկի չափով:

2. Ֆինանսատնտեսական գործունեության առանձին տեսակների, ներառյալ՝ ծառայությունների մատուցման, ապրանքների և ֆինանսական միջոցների շրջանառության սահմանափակումները խախտելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկից մինչև հազարապատիկի չափով:

3. Սահմանված՝ սննդամթերքի, դեղորայքի և առաջին անհրաժեշտության ապրանքների վաճառքի, ձեռքբերման և շրջանառության հատուկ կարգը խախտելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկից մինչև հազարապատիկի չափով:

4. Պարետային ժամի սահմանման դեպքում առանց անձը հաստատող փաստաթղթերի և հատուկ թույլտվությունների փողոցներում ու այլ հասարակական վայրերում գտնվելու արգելքը խախտելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից մինչև երկուհարյուրապատիկի չափով:

5. Լրատվական գործունեություն իրականացնողի կողմից ռազմական դրության ընթացքում տեղեկությունների հրապարակման կամ տարածման կանոնները խախտելը, լրագրողի կողմից հավատարմագրման հատուկ կարգը չպահպանելը, կապի միջոցներից օգտվելու հատուկ կանոնները խախտելը առաջացնում է տուգանքի նշանակում՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի յոթհարյուրապատիկից մինչև հազարապատիկի չափով:

6. Լրատվական գործունեություն չիրականացնող անձանց կողմից ռազմական դրության ընթացքում տեղեկությունների հրապարակման կամ տարածման կանոնները խախտելը կամ կարծիքի արտահայտման ազատության սահմանափակման կանոնները խախտելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկից մինչև յոթհարյուրապատիկի չափով:

7. Սույն հոդվածի 5-րդ և 6-րդ մասերով նախատեսված տույժերին ենթարկվելուց հետո՝ անհապաղ, ռազմական դրության ընթացքում սահմանված տեղեկությունների հրապարակման կամ տարածման կանոնների խախտմամբ տարածված հրապարակումը չվերացնելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ լրատվական գործունեություն իրականացնողի նկատմամբ՝ նվազագույն աշխատավարձի հազարապատիկից մինչև հազարհինգհարյուրապատիկի չափով, իսկ լրատվական գործունեություն չիրականացնող անձանց նկատմամբ՝ յոթհարյուրապատիկից մինչև հազարապատիկի չափով:

8. Զենքի, ռազմամթերքի, պայթուցիկ և թունավոր նյութերի, հատուկ միջոցների վաճառքի սահմանափակումը կամ արգելքը խախտելը, թմրեցնող, հոգեմետ, ուժեղ ներգործող նյութեր պարունակող դեղագործական միջոցների և պրեպարատների, էթիլային սպիրտի, ալկոհոլային խմիչքների, սպիրտ պարունակող արտադրանքի շրջանառության հատուկ ռեժիմը խախտելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկից մինչև հազարապատիկի չափով:

9. Պաշտպանական, քաղաքացիական պաշտպանության միջոցառումների, վթարավերականգնողական և այլ անհետաձգելի աշխատանքներին սահմանված կարգով ներգրավումից աշխատունակ անձի հրաժարվելը կամ տրանսպորտային միջոց տրամադրելուց հրաժարվելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկից մինչև հինգհարյուրապատիկի չափով:

10. Ռազմական դրության ժամանակ գործադուլներ և հավաքներ կազմակերպելը, անցկացնելը և դրանց մասնակցելը, կազմակերպությունների գործունեությունը դադարեցնող կամ կասեցնող այլ միջոցառումների արգելքը խախտելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի չորսհարյուրապատիկից մինչև յոթհարյուրապատիկի չափով:

11. Կազմակերպությունների (անկախ կազմակերպական-իրավական ձևից) կողմից Հայաստանի Հանրապետության տնտեսության, պաշտպանության և բնակչության կենսագոյության համար հատուկ նշանակություն ունեցող արտադրանքի թողարկման (ներառյալ՝ դեղերի և բժշկական նշանակության ապրանքների արտադրման ու ներմուծման) առաջնահերթ կատարման ենթակա առաջադրանքները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկից մինչև հազարապատիկի չափով:

12. Ռազմական դրության իրավական ռեժիմն ապահովող մարմինների գործունեությանը խոչընդոտելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից մինչև հինգհարյուրապատիկի չափով:

13. Սույն հոդվածով սահմանված արարքներից որևէ մեկը (բացառությամբ սույն հոդվածի 14-րդ մասով նախատեսված արարքների) վարչական տույժ նշանակելու օրվանից հետո կրկին կատարելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ նախկինում նույն արարքի համար նշանակված տուգանքի կրկնապատիկի չափով:

14. Կազմակերպության կողմից սույն հոդվածի 2-րդ, 3-րդ, 5-րդ, 8-րդ 11-րդ մասերով նախատեսված արարքներից որևէ մեկը վարչական տույժ նշանակելու օրվանից հետո կրկին կատարելը՝

առաջացնում է տնտեսական գործունեության կասեցում՝ մեկ ամսից մինչև երեք ամիս ժամկետով, սակայն ոչ ավելի, քան մինչև ռազմական դրության իրավական ռեժիմի ավարտը:»:

Հոդված 4. Օրենսգրքի 214-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետում « Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը, » բառերից հետո լրացնել «Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը,» բառերը:

Հոդված 5. Օրենսգրքում լրացնել 223.3-րդ հոդված՝ հետևյալ բովանդակությամբ.

«Հոդված 223.3. Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողով

Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը քննում է սույն օրենսգրքի 182.5-րդ հոդվածի 5-րդ, 7-րդ և 14-րդ հոդվածներով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը, եթե դրանք վերաբերում են տեսալսողական մեդիածառայություն մատուցող լրատվական գործունեություն իրականացնողներին:

Հոդված 6. Օրենսգրքի 224-րդ հոդվածի 1-ին մասում «և 10-րդ մասերով,» բառերից հետո լրացնել «182.5-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 4-10-րդ (բացառությամբ սույն օրենսգրքի 223.3-րդ հոդվածով նախատեսված իրավախախտումների), 12-14-րդ մասերով» բառերը:

Հոդված 7. Օրենսգրքի 230-րդ հոդվածի 1-ին մասում «և 11-րդ մասերով» բառերից հետո լրացնել «182.5-րդ հոդվածի 3-րդ (նախատեսվածդեղորայքի ձեռքբերման և շրջանառության հետ կապված իրավախախտումների), 11-րդ (դեղերի և բժշկական նշանակության ապրանքների արտադրման ու ներմուծման հետ կապված իրավախախտումների) և 14-րդ մասերով,» բառերը:

Հոդված 8. Օրենսգրքի 238.2-րդ հոդվածում «և 4-րդ մասերով,» բառերից հետո լրացնել «182.5-րդ հոդվածի 3-րդ (բացառությամբ դեղորայքի) և 14-րդ մասերով,» բառերը:

Հոդված 9. Օրենսգրքի 244^7-րդ հոդվածի 1-ին մասում «26-րդ մասերով»» բառերից հետո լրացնել «182.5-րդ հոդվածի 11-րդ (բացառությամբ դեղերի և բժշկական նշանակության ապրանքների արտադրման ու ներմուծման հետ կապված իրավախախտումների) և 14-րդ մասով,» բառերը:

Հոդված 10. Օրենսգրքի 290-րդ հոդվածում « և 29» բառերից հետո լրացնել «, 31.1-ին» բառերը:

Հոդված 11. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակումից հետո՝ անմիջապես:

ՏԵՂԵԿԱՆՔ

(«ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԲԵՐՅԱԼ)

Երկրորդ ընթերցում

Կ-761-08.10.2020-ՊԻ-011/1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ
ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության 1985 թվականի դեկտեմբերի 6-ի օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 23-րդ հոդվածի 1-ին մասում լրացնել հետևյալ բովանդակությամբ 7.1-ին կետ.

«7.1) տնտեսական գործունեության կասեցում.»

Հոդված 2. Օրենսգիրքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 31.1-ին հոդվածով.

«**Հոդված 31.[1] Տնտեսական գործունեության կասեցումը**

1. Տնտեսական գործունեության կասեցումը տնտեսական գործունեության ժամանակավոր դադարեցումն է:

2. Տնտեսական գործունեության կասեցումը կարող է նշանակվել մեկ ամսից մինչև երեք ամիս ժամկետով:»

Հոդված 3. Օրենսգիրքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 182[5]–րդ հոդվածով՝

«**Հոդված 182[5] Ռազմական դրության իրավական ռեժիմի ընթացքում գործող կանոնները խախտելը**

6. Ռազմական դրություն հայտարարված տարածքում ազատ տեղաշարժվելու իրավունքի սահմանափակումը կամ տարածք մուտք գործելու և տարածքից դուրս գալու հատուկ ռեժիմը խախտելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից մինչև երեքհարյուրապատիկի չափով:

7. Ֆինանսատնտեսական գործունեության առանձին տեսակների, ներառյալ՝ ծառայությունների մատուցման, ապրանքների և ֆինանսական միջոցների շրջանառության սահմանափակումները խախտելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկից մինչև հազարապատիկի չափով:

8. Սահմանված՝ սննդամթերքի, դեղորայքի և առաջին անհրաժեշտության ապրանքների վաճառքի, ձեռքբերման և շրջանառության հատուկ կարգը խախտելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկից մինչև հազարապատիկի չափով:

9. Պարետային ժամի սահմանման դեպքում առանց անձը հաստատող փաստաթղթերի և հատուկ թույլտվությունների փողոցներում ու այլ հասարակական վայրերում գտնվելու արգելքը ~~խախտելը կամ սահմանված այլ կանոնները~~ խախտելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից մինչև երկուհարյուրապատիկի չափով:

10. Լրատվական գործունեություն իրականացնողի կողմից ռազմական դրության ընթացքում տեղեկությունների հրապարակման կամ տարածման ~~գործող~~ կանոնները խախտելը, լրագրողի կողմից հավատարմագրման հատուկ կարգը չպահպանելը, կապի միջոցներից օգտվելու հատուկ կանոնները խախտելը առաջացնում է տուգանքի նշանակում՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի յոթհարյուրապատիկից մինչև հազարապատիկի չափով:

6. Լրատվական գործունեություն չիրականացնող անձանց կողմից ռազմական դրության ընթացքում տեղեկությունների հրապարակման կամ տարածման ~~գործող~~ կանոնները խախտելը կամ կարծիքի արտահայտման ազատության սահմանափակման կանոնները խախտելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկից մինչև յոթհարյուրապատիկի չափով:

7. Սույն հոդվածի 5-րդ և 6-րդ մասերով նախատեսված տույժերին ենթարկվելուց հետո՝ անհապաղ, ռազմական դրության ընթացքում սահմանված տեղեկությունների հրապարակման կամ տարածման կանոնների խախտմամբ տարածված հրապարակումը չվերացնելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ լրատվական գործունեություն իրականացնողի ~~սահմանված~~ նկատմամբ՝ նվազագույն աշխատավարձի հազարապատիկից մինչև հազարհինգհարյուրապատիկի չափով, իսկ լրատվական գործունեություն չիրականացնող անձանց նկատմամբ՝ յոթհարյուրապատիկից մինչև հազարապատիկի չափով:~~÷~~

8. Զենքի, ռազմամթերքի, պայթուցիկ և թունավոր նյութերի, հատուկ միջոցների վաճառքի սահմանափակումը կամ արգելքը խախտելը, թմրեցնող, հոգեմետ, ուժեղ ներգործող նյութեր պարունակող դեղագործական միջոցների և պրեպարատների, էթիլային սպիրտի, ալկոհոլային խմիչքների, սպիրտ պարունակող արտադրանքի շրջանառության հատուկ ռեժիմը խախտելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկից մինչև հազարապատիկի չափով:

9. Պաշտպանական, քաղաքացիական պաշտպանության միջոցառումների, վթարավերականգնողական և այլ անհետաձգելի աշխատանքներին սահմանված կարգով ներգրավումից աշխատունակ անձի հրաժարվելը կամ տրանսպորտային միջոց տրամադրելուց հրաժարվելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկից մինչև հինգհարյուրապատիկի չափով:

10. Ռազմական դրության ժամանակ գործադուլներ և հավաքներ կազմակերպելը, անցկացնելը և դրանց մասնակցելը, կազմակերպությունների գործունեությունը դադարեցնող կամ կասեցնող այլ միջոցառումների արգելքը խախտելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի չորսհարյուրապատիկից մինչև յոթհարյուրապատիկի չափով:

11. Կազմակերպությունների (անկախ կազմակերպական-իրավական ձևից) կողմից Հայաստանի Հանրապետության տնտեսության, պաշտպանության և բնակչության կենսագոյության համար հատուկ նշանակություն ունեցող արտադրանքի թողարկման (ներառյալ՝ դեղերի և բժշկական նշանակության ապրանքների արտադրման ու ներմուծման) առաջնահերթ կատարման ենթակա առաջադրանքները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկից մինչև հազարապատիկի չափով:

12. Ռազմական դրության իրավական ռեժիմն ապահովող մարմինների գործունեությանը խոչընդոտելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից մինչև հինգհարյուրապատիկի չափով:

~~13. Ռազմական դրության գործողության ընթացքում սահմանված այլ միջոցառումները և սահմանափակումները խախտելը՝~~

~~առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից մինչև երեքհարյուրապատիկի չափով:~~

~~14~~13. Սույն հոդվածով սահմանված արարքներից որևէ մեկը (բացառությամբ սույն հոդվածի ~~15~~14-րդ մասով նախատեսված արարքների) վարչական տույժ նշանակելու օրվանից հետո կրկին կատարելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ նախկինում նույն արարքի համար նշանակված տուգանքի կրկնապատիկի չափով:

~~15~~14. Կազմակերպության կողմից սույն հոդվածի 2-րդ, 3-րդ, 5-րդ, 8-րդ 11-րդ մասերով նախատեսված արարքներից որևէ մեկը վարչական տույժ նշանակելու օրվանից հետո կրկին կատարելը՝

առաջացնում է տնտեսական գործունեության կասեցում՝ մեկ ամսից մինչև երեք ամիս ժամկետով, սակայն ոչ ավելի, քան մինչև ռազմական դրության իրավական ռեժիմի ավարտը:»:

Հոդված 4. Օրենսգրքի 214-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետում «Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը,» բառերից հետո լրացնել «Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի,» բառերը:

Հոդված 5. Օրենսգրքում լրացնել 223.3-րդ հոդված հետևյալ բովանդակությամբ.

«Հոդված 223.3. Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողով

Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը քննում է սույն օրենսգրքի 182.5-րդ հոդվածի 5-րդ, 7-րդ և 14-րդ հոդվածներով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը, եթե դրանք վերաբերում են տեսալսողական մեդիածառայություն մատուցող լրատվական գործունեություն իրականացնողներին:

Հոդված 46. Օրենսգրքիում 224-րդ հոդվածի 1-ին մասում կատարել հետևյալ լրացումները՝

Օրենսգրքի 224-րդ հոդվածի 1-ին մասում «և 10-րդ մասերով,» բառերից հետո լրացնել «182.5-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 4-10-րդ (բացառությամբ սույն օրենսգրքի 223.3-րդ հոդվածով նախատեսված իրավախախտումների) -րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ , 8-րդ, 9-րդ, 10-րդ, 12-14-րդ, 13-րդ, 14-րդ և 15-րդ մասերով» բառերը:

1. **Հոդված 7.** Օրենսգրքի 230-րդ հոդվածի 1-ին մասում «և 11-րդ մասերով» բառերից հետո լրացնել «182.5-րդ հոդվածի 3-րդ (նախատեսված դեղորայքի ձեռքբերման և շրջանառության հետ կապված իրավախախտումների), 11-րդ (դեղերի և բժշկական նշանակության ապրանքների արտադրման ու ներմուծման հետ կապված իրավախախտումների) և 1514-րդ մասերով» բառերը:

Հոդված 8. Օրենսգրքի 238.2-րդ հոդվածում «և 4-րդ մասերով,» բառերից հետո լրացնել «182.5-րդ հոդվածի 3-րդ (բացառությամբ դեղորայքի) և 1514-րդ մասերով» բառերը:

Հոդված 9. Օրենսգրքի 244^7-րդ հոդվածում հոդվածի 1-ին մասում «158-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ, 23-րդ, 24-րդ և 26-րդ մասերով»158 հոդվածի երկրորդ, երրորդ, քսանմեկերորդ, քսաներեքերորդ և քսանչորսերորդ մասերով» բառերից հետո լրացնել «182.5-րդ հոդվածի 11-րդ (բացառությամբ դեղերի և բժշկական նշանակության ապրանքների արտադրման ու ներմուծման հետ կապված իրավախախտումների) և 1514-րդ մասով» բառերը:

Հոդված 510. Օրենսգրքի 290-րդ հոդվածում « և 29» բառերից հետո լրացնել «, 31.1-ին» բառերը:

Հոդված 611. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հրապարակումից հետո՝ պահից՝ անմիջապես:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ (Կ-761-08.10.2020-ՊԻ-011/0, Կ-761[1]-08.10.2020-ՊԻ-011/0, Կ-761[2]-08.10.2020-ՊԻ-011/0, Կ-761[3]-08.10.2020-ՊԻ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկությունն երն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	Կառավարություն	**«Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» նախագծի 1-ին հոդված**	Օրենսգրքի 23-րդ հոդվածի 1-ին մասում լրացվող 7.1-ին կետը շարադրել հետևյալ բովանդակությամբ. «7.1) տնտեսական գործունեության կասեցում.»	Ընդունվել է:	Ընդունվել է:

2	Կառավարություն	**«Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» նախագծի 4-րդ հոդված**	Նախագծի 4-րդ հոդվածում նախատեսվում է լրացումներ կատարել միանգամից Օրենսգրքի մի քանի հոդվածներում: Իրավական տեխնիկայի կանոններից ելնելով՝ առաջարկվում է յուրաքանչյուր հոդվածում նախատեսվող լրացումները կատարել նախագծի առանձին հոդվածներով: Փոփոխության արդյունքում նախագծի 4-րդ հոդվածով սահմանված լրացումների մի մասը նախատեսվելու է առանձին 5-7-րդ հոդվածներով, իսկ այդ հոդվածների բովանդակությունը համապատասխանեցվելու է «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքով սահմանված կանոններին:Համապատասխանաբար փոփոխվելու է նախագծի մյուս հոդվածների համարակալումը: Նախագիծը կազմկված կլինի ինը հոդվածներից: Միաժամանակ առաջարկվում է 182.5-րդ հոդվածի 11-րդ մասով նախատեսված (*Կազմակերպությունների (անկախ կազմակերպական-իրավական ձևից)*	Ընդունվել է:	Ընդունվել է:

			կողմից Հայաստանի Հանրապետության տնտեսության, պաշտպանության և բնակչության կենսագոյության համար հատուկ նշանակություն ունեցող արտադրանքի թողարկման (ներառյալ՝ դեղերի և բժշկական նշանակության ապրանքների արտադրման ու ներմուծման) առաջնահերթ կատարման ենթակա առաջադրանքները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը) իրավախախտման համար ևս իրավասու մարմին սահմանել առողջապահական տեսչական մարմնին՝ միայն դեղերի և բժշկական նշանակության ապրանքների արտադրման ու ներմուծման հետ կապված իրավախախտումների մասով: Այս նպատակով Օրենսգրքի 230-րդ հոդվածում առաջարկվում է նախատեսել համապատասխան լրացում և համապատասխանաբար բացառություն նախատեսել Օրենսգրքի 244.7-րդ հոդվածում՝ բացառելով որ շուկայի վերահսկողության տեսչական մարմինը քննի Աղողջապահական տեսչական մարմնի ենթակայությանը հանձնված		

			գործերը:		
3	Կառավարություն	**«Վարչական դատավարության օրենսգրքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածի 2-րդ մաս**	**Նախագծի 1-ին հոդվածի 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «2-րդ մասում «և 5-րդ» բառերը փոխարինել «, 5-րդ և 6-րդ» բառերով: Նախագծի վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ. Վարչական դատավարության օրենսգրքում լրացում և փոփոխություն կատարելու մասին»**	Ընդունվել է:	Ընդունվել է:
4	Կառավարություն	**«Քրեական օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդված**	Նախագծով լրացվող 307[1]**–րդ հոդվածի 1-ին մասում «գործողության» բառը փոխարինել «իրավական ռեժիմի» բառով:**	Ընդունվել է:	Ընդունվել է:
5	Կառավարություն	**«Քրեական օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդված**	**Նախագծով լրացվող** 307[2]**–րդ հոդվածներում «մինչև» բառը փոխարինել «առավելագույնը» բառով:**	Ընդունվել է:	Ընդունվել է:
6	Կառավարություն	**«Քրեական**	Նախագծով լրացվող 307[3]**–րդ հոդվածում**	Ընդունվել է:	Ընդունվել է:

		օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդված	**«կասեցված» բառերից հետո լրացնել «տնտեսական բառերը, իսկ «մինչև» բառը փոխարինել «առավելագույնը» բառով»:**		
7	Կառավարություն	**«Քրեական օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդված**	Նախագծով լրացվող 307[4]**-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.** **«Հոդված 307.[4] Ռազմական դրության իրավական ռեժիմի ընթացքում տեղեկությունների հրապարակման կամ տարածման կանոնները խախտելը** 1. Ռազմական դրության իրավական ռեժիմի ընթացքում տեղեկությունների հրապարակման կամ տարածման կանոնները խախտելը, **որն էական վնաս է պատճառել անձանց կամ կազմակերպությունների իրավունքներին կամ օրինական շահերին կամ հասարակության կամ պետության օրինական շահերին՝** պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկից	Ընդունվել է:	Ընդունվել է:

			երեքհազարապատիկի չափով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:»:		
8	Կառավարություն	«Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում լրացումներ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացումներ կատարելու մասին», «Վարչական դատավարության օրենսգրքում լրացում կատարելու մասին» և «Քրեական դատավարության օրենսգրքում լրացում կատարելու մասին»	**Առաջարկվում է նախագծերի վերջին՝ ուժի մեջ մտնելուն վերաբերող հոդվածները շարադրել հետևյալ խմբագրությամբ.** «Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակումից հետո՝ անմիջապես:»:	Ընդունվել է:	Ընդունվել է:

		օրենքների նախագծեր			
9	Կառավարություն	**«Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ**	**Առաջարկվում է Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում կատարել լրացում համաձայն որի՝ վարչական իրավախախտումներ քննելու իրավասություն ունեցող մարմին կհամարվի նաև Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ վերջինս որոշակի լիազորություններ ունի** տեսալսողական մեդիածառայություն մատուցող լրատվական գործունեություն իրականացնողների գործունեության ոլորտում: Համապատասխանաբար Նախագծով լրացվող 182.5-րդ հոդվածի 5-րդ, 7-րդ և 15-րդ մասերով սահմանված իրավախախտումների վերաբերյալ գործերը կարող է քննել Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը:	Ընդունվել է:	Ընդունվել է:
10	Կառավարություն	**«Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում**	**Առաջարկվում է օրենսգրքում լրացվող 182.5-րդ հոդվածի 4-րդ մասից հանել «կամ սահմանված այլ կանոնները**	Ընդունվել է:	Ընդունվել է:

		լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ	**խախտելը» բառերը,**		
11	Կառավարություն	**«Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ**	**Առաջարկվում է օրենսգրքում լրացվող 182.5-րդ հոդվածի 5-րդ և 6-րդ մասերի** տեքստից հանել «գործող» բառը:		
12	Կառավարություն	**«Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ**	**Առաջարկվում է օրենսգրքում լրացվող 182.5-րդ հոդվածի 7-րդ մասով նախատեսված իրավախախտման համար նախատեսվող սանկցիան սահմանել հետևյալ բովանդակությամբ՝** «առաջացնում է տուգանքի նշանակում՝ լրատվական գործունեություն իրականացնողի նկատմամբ՝ նվազագույն աշխատավարձի հազարհինգհարյուրապատիկից հազարհինգհարյուրապատիկի չափով, իսկ լրատվական գործունեություն չիրականացնող անձանց նկատմամբ՝ յոթհարյուրապատիկից մինչև հազարապատիկի չափով:»:	Ընդունվել է:	Ընդունվել է:
13	Կառավարություն	**«Վարչական իրավախախտումների վերաբերյալ**	**Առաջարկվում է հանել օրենսգրքում լրացվող 182.5-րդ հոդվածի 13-րդ մասը: Փոփոխության պարագայում կփոխվեն**	Ընդունվել է:	Ընդունվել է:

		օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ	**նաև 13-րդ մասից հետո առկա մասերի համարակալումները և այլ հոդվածներում այդ մասերին տրված հղումները:**		